

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՔԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Հնդիանուր դրույթներ**

- Սույն կանոնադրությունը կազմված է «Քաղաքաշխնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի համաձայն Հրազդան համայնքի տարածքում քաղաքաշխնական գործունեության առանձնահատուկ խնդիրները կանոնակարգելու նպատակով քաղաքաշխնության բնագավառի նորմատիվ-իրավական ակտերին համապատասխան:
- Սույն կանոնադրության գործողությունը տարածվում է Հրազդան համայնքի տարածքում գունվող քաղաքաշխնական գործունեության բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության իրավունքի սուրյեկտներից:
- Եթե Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերի և(կամ) Հրազդան համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծով սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների կարգավորման վերաբերյալ սահմանված են այլ նորմեր, ապա գործում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերի և(կամ) գլխավոր հատակագծով սահմանված նորմերը:
- Սույն կանոնադրությամբ սահմանված առանձին նորմերը համայնքի ավագունու որոշման կարող են վերանայվել և փոփոխվել Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերով համապատասխան խնդիրների կարգավորման վերաբերյալ այլ նորմեր սահմանելու դեպքում:

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՆԱԿԱԳԾՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)**  
**ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

- «Քաղաքաշխնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17 և 22.1 հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման հավելված N1 -ի կարգի 5-րդ գլխի համաձայն Հրազդան համայնքում նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային սուածարդանքը) տալիս է համայնքի դեկանալոր:
- Կառուցապատողը քաղաքաշխնական գործունեություն իրականացնելու նպատակով նախագծման թույլտվություն ստանալու համար համայնքի դեկանալու և ներկայացնում հայտ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N5 հավելվածի N 1-1 ձևի), որում նշվում են նախագծվող նոր օբյեկտի կամ փոփոխման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման կամ գործառնական նշանակության փոփոխության, ինչպես նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման և փոփոխման) ենթակա օբյեկտի (կամ դրա մի հատվածի) գտնվելու վայրը, նշանակությունը, նախատեսվող մակերեսը, կառույցի բարձրությունը, կառույցի գործառնական նշանակության փոփոխման դեպքում փոփոխման նպատակը և սույն կետում նշված ձևաթղթում ներկայացված այլ տեղեկություններ:

7. Համայնքի ղեկավարը նախագծման թույլտվություն (ճարտարապետակազմային առաջադրանք) տրամադրելիս շրագդան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող (վերակառուցվող, վերանորոգվող) շենքերի և շինությունների տանիքների և արտաքին ճարտարապետական տեսքերի (եղնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից) ներկայացնում է առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ RGB 159-51-33 54-76-80, RAL 3016 49/31981 7011 գույներով:

8.Գոյաւթյուն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառուց կամ այլ բարելավում, վերափոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը:

9.Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող գույքի ձևափոխման նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին կցում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական լիազորված մարմնի համաձայնությունը կամ մասնագիտական եզրակացությունը:

10.Իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ առաջադրանքը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N5 հավելվածի N 1-2 ձև) կառուցապատողին է տրամադրում հայտի քննունման օրվանից 10-օրյա ժամկետում՝ II կատեգորիայի օբյեկտների համար, 15-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի օբյեկտների համար, 20-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար՝ մատուկարար կազմակերպություններից տեխնիկական պայմաններ ստանալու անհրաժեշտության դեպքում, իսկ մերժման դեպքում՝ նշում մերժման պատճառները:

11.Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժման մեջման մեջման մեջման մեջման մեջման մարմնին:

12.Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և հնգօրյա ժամկետում՝ II կատեգորիայի օբյեկտների համար, 10-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի օբյեկտների համար, 15-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար կառուցապատողին տալիս առաջադրանք:

13.Հայսի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍՏԱԿԵՐՆԵՐԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԽԱՄԱՐՏՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՍՏԱՑՆԵՑՄԱՆ ԵՎ  
ՀԱՍՏԱՑՄԱՆ ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՔԱՆԴԱԱՆ ԿԱՄ ԱՊԱՍՈՆՏԱԺՄԱՆ)  
ԹՈՒՅԼԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

14.Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյաւթյուն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:

15.Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:

16. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն խոշորացնելու մասին գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիսություններին:

17. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:

18. Շինարարության (քանդման) թույլտվությունը Հրազդան համայնքում տախու է համայնքի ղեկավարը «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաշելու մասին» N596-Ն որոշմամբ սահմանված կարգով:

19. Քաղաքաշինական թույլտվություններ տրամադրվում է նաև էլեկտրոնային համակարգով՝ համաձյն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաշելու մասին» N596-Ն որոշմամբ հաստատված N3 հավելվածի կարգի:

20. Շինարարության թույլտվությունը սրվում է նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք) տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանակած կարգով համաձյնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրական առարկություն չի ներկայացնում համաձյնեցնող մարմնին:

21. Շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով:

22. Հրազդան համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:

23. Թույլտվության տեսակներն են՝

1) նոր կառուցվող օբյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնուաժային աշխատանքների կառարման թույլտվությունը,

2) գոյուրյուն ունեցող օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման աշխատանքների կառարման թույլտվությունը,

3) գոյուրյուն ունեցող օբյեկտների քանդման թույլտվությունը:

24. Կառուցապատողը շինարարության թույլտվություն ստանալու համար համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաշելու մասին» N596-Ն որոշմամբ

հաստատված կարգի N5 հավելվածի 2և N2-1).

2)օյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերը, որտեղ նշվում են շինարարության տեղության ժամկետը, իսկ փուլերով մշակող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթղթերը:

3) շինարարության թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու մասին անդրրագիրը, նախագծային փաստաթղթերը (երկու օրինակից), փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ տեղական տուրքը վճարելու մասին անդրրագրի (անդրրագրերի) փոխարեն կարող է ներկայացվել նաև պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդրրագիրը կամ անդրրագրի 20-նիշանոց ծածկագիրը:

## 25. Դիմումում նշվում են՝

1) օյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,

2) օրենքով սահմանված դեպքերում՝ օյեկտի նախագծային փաստաթղթերը մշակած և սահմանված կարգով փորձաքննություն անցկացրած տնտեսավարող սուբյեկտները՝ համապատասխան գործունեության իրականացման լիցենզիաների համարներով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի երաշխավորագիրը:

26. Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղք համապատասխան աղքավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:

27. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

28. Աեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստուհալու համար հսկայնքապետարան է ներկայացում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի սրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմամբ հաստատված կարգի N5 հավելվածի 2և N2-2),

2) անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի սյատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը):

3) շինարարության քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու մասին անդրրագիրը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ տեղական տուրքը վճարելու մասին անդրրագրի (անդրրագրերի) փոխարեն կարող է ներկայացվել նաև պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդրրագիրը կամ անդրրագրի 20-նիշանոց ծածկագիրը:

## 29. Դիմումում նշվում են՝

- 1) քանդվող օբյեկտի նշանակությունը (քնույթը) և հասցեն,
- 2) քանդման նպատակը,
- 3) քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները:

30. Համայնքի ղեկավարը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթղթերը քննարկում և տալիս է թույլտվություն կամ մերժում դիմում ստանալու օրվանից՝

- 1) II ոխկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝
  - ա. Յ-օրյա ժամկետում՝ քազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակապման դեպքում, ինչպես նաև շենքերի և շինությունների արտաքին գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման դեպքում.
  - բ. 5-օրյա ժամկետում՝ սույն կետի I-ին ենթակետի «ա» պարբերության մեջ չնշված օբյեկտների դեպքում.

2) 10-օրյա ժամկետում՝ III ոխկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում.

3) 15-օրյա ժամկետում՝ IV ոխկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում:

31. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատում նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաշելու մասին» N596-Ն որոշմամբ հաստատված N5 հավելվածի ձևեր N 2-3-1 և N2- 4:

32. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակնքում է թույլտվություն տվող իրավասու մարմինը:

33. Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացում հնարավոր չէ սուանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջ տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում է նաև քանդման թույլտվություն:

34. Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ նախագծման թույլտվության (ճարտարապետահատկագծային առաջադրանքով) սահմանված հերթականությամբ:

35. Այն դեպքում, եթե տեղանքի ճարտարագիտական ուսումնասիրություններն առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատկագծային առաջադրանքի հետ միաժամանակ՝ մինչև շինարարության թույլտվություն ստանալը, քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

36. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջ տրվում է քանդման թույլտվություն:

37. Կրկնակի դիմումը և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմույթի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է դիմում ստանալու օրվանից՝

1) II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝

ա. Յ-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակայման դեպքում, ինչպես նաև շենքերի և շինությունների արտաքին գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման դեպքում.

բ. 5-օրյա ժամկետում՝ սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության մեջ նշված օբյեկտների դեպքում.

2) 10-օրյա ժամկետում՝ III ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում.

3) 15-օրյա ժամկետում՝ IV ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում:

38. Համայնքի դեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվության տրամադրման կամ վերջինիս մերժման մասին կառուցապատողը տեղեկացվում է դիմումում նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով:

39. Թույլտվության ձևակերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չակելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել թույլտվություն տվող իրավասու մարմնին՝ կառուցապատման տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ և սույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:

40. Կառուցապատողը շինարարական (քանդման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ տեղեկացնում է Հրազդանի համայնքապետարանին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմամբ հաստատված N5 հավելվածի Ձև N2-5 (Էլեկտրոնային համակարգի միջոցով, ծանուցելու դեպքում՝ սույն որոշման N 3 հավելվածի 6-րդ կետում նշված գրանցման համարով), համայնքն իր հերթին՝ եռօրյա ժամկետում դրա մասին իրազեկում է քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով սույն կետում նշված ձևաթղթով կառուցապատողի ներկայացրած տեղեկանքի պատճենը:

41. Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում՝ սույն կարգի 40 կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N 5 ձևում նշված համապատասխան տեղեկանքի տվյալների փոփոխման մասին:

42. Նախագծային լուծումների՝ սահմանված կարգով փոփոխման դեպքում շինարարության թույլտվության մեջ կատարվում է գրառում:

## ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԿՐՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշմամբ:

44. Ոչ հիմնական շինությունների նախագծային փաստաթղթերը մշակվում են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվում են շինությունների տարածական չափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ենելով տեղանքի և (կամ) օբյեկտի սուանձնահատկությունից:

45. Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ նրա կողմից համաձայնեցված և պատվիրատուի կողմից հաստատված նախագծի հիման վրա:

**ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱԽԱԿԱՆ**  
**ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

46. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժուժած անձը:

47. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշմանը սահմանված կարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Հրազդան համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծման թույլտվության (ճարտարապետակագծային առաջադրանքի) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

**ԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՈՎԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

48. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժուժած օգտագործողը բաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող: Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային, բաղաքաշինական, վարչական իրավահայտումների վերաբերյալ օրենսդրություն «Բաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

49. Հրազդան համայնքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սանիտարական պաշտպանության, կառուցապատվող հողերի պահպանության խնդիրներն սպահովելու նպատակով, կառուցապատողը պարտապիր է կատարել հետևյալ կանոնները.

1) Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտապիր է ներկայացնել շինարարական աղբք համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:

2) Փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայթերը ժամանակավոր սարքավորել հետիւտնի անխտանգ շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բարիքներով ու ծածկոցներով:

3) Կառուցապատողը պարտապիր է իրականացնել հողի բերքի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հողի բերքի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշման համաձայն:

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՍՏԱՏՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ  
ԿԱՌՈՒԹՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՔՈՎ ՈՉ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԵՎ  
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԿԱՌՈՒԹՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՔՈՎ  
ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՍՄԱԴՐԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԸ**

50. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածի ցանկում ընդգրկված հողամասերը կառուցապատման իրավունքով ոչ մրցութային կարգով, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով մրցութային կարգով օգտագործման տրամադրամ ժամկետներ իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

51. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար վճարները սահմանվում են համայնքի պահանու կողմից:

**ՔԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՔԸՆԸՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

52. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

53. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է «Վարչական իրավահայուսումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՍՏԱՏՔՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ՀԱՍՏԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹԻՉԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

54. Հրազդան համայնքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և իրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն իրականացվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 14 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և իրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N 660 որոշման համաձայն և սույն կարգով:

55. Հրազդան համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնությանն իրազեկում է համայնքի ղեկավարը:

56. Իրազեկումն իրականացվում է:

1) համայնքային ելեկտրոնային կայք-էջում տեղադրմամբ.

**2) հասարակական քննարկումներով:**

57. Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում նորմատիվ և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրակոր ներկայացնում են համայնքապետարանի աշխատակազմին:

58. Համայնքի ղեկավարը հասարակայնության ներկայացուցիչների (դիտողությունների և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ դիտողությունների ու առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո Յ-օրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին:

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԱՎԱՐՏՎԱԾ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ)**

59. Կառուցված շինության (այդ թվում՝ վերակառացված, վերականգնված, ուժեղացված, արդիականացված, ընդլայնված) շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և, ըստ գործառնական նշանակության, շահագործման ընդունումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1-ին կետով սահմանված շինարարական աշխատանքների, փաստագրվում են ավարտական ակտով (շահագործման թույլտվությամբ)՝ համաձայն N5 հավելվածի N 3-1 ձեր, հաստատված նախագծով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բալոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և օրենքով ու սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կապալառուի կողմից ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո:

60. Ավարտական ակտ (շահագործման թույլտվություն)՝ ստանալու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ համաձայն N5 հավելվածի N 3-3-1 ձեր:

61. Դիմումին կցվում են՝

1) ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկեղողմանի ակտը.

2) երկեղողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները.

3) կառարողական փաստաթղթերի ցանկը.

4) ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

62. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթղթերի հիման վրա տրամադրում է ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը), դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայատուանի Հանրապետության օրենսդրությամբ II և III դիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օրյեկտների համար՝ եռօրյա ժամկետում,

2) Հայատուանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V դիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օրյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:

63. Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով՝ նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար ըստ Հայատուանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայատուանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայատուանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմամբ հաստատված կարգի չկապահանջման շինարարության թույլտվություն:

64. Բնքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փատուազրման:

65. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 62 կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմումի՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 61 կետի պահանջներին շիամապատասխանելու հիմքով:

66. Իրավասու մարմնի առաջադրած պահանջները բավարարվելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:

67. Ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) կազմվում է երեք օրինակից, որոնցից մեկը մնում է իրավասու մարմնի մոտ, իսկ երկու օրինակը տրվում է կառուցապատողին՝ Հայատուանի Հանրապետության կառավարությանն առընթեք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմին գրանցման ներկայացնելու համար:

68. Համայնքի դեկանական ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում դրա մասին ծանուցում է համապատասխան մարզպետին և քաղաքաշինական տեսչության տարածքային բաժնին՝ կցելով ձևակերպված վարչական ակտի պատճենը:

69. Ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) հիմք է կառուցված օրյեկտի և դրա կազմում ստորաբաժանված միավորների նկատմամբ գույքային իրավունքների գրանցման կամ Հայատուանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեկրետում՝ տվյալ օրյեկտի շահագործման իրավունքի ամրագրված սահմանափակումը դադարեցնելու համար:

70. Ավարտական ակտի (շահագործման թույլտվության) հիման վրա կառուցված օրյեկտի և դրա կազմում ստորաբաժանված միավորների նկատմամբ գույքային իրավունքների գրանցման համար հիմք է շափագրում (հաշվառում) իրականացրած անձի եզրակացությունն ավարտված շինարարական օրյեկտը ոչ էական շեղումներով կառուցված լինելու վերաբերյալ: Ոչ էական են համարվում՝

1) յուրաքանչյուր հարկի մակերեսի՝ մինչև 5 տոկոսի չափով շեղումը.

2) կառույցի բարձրության՝ մինչև 1.2 մետր չափով համամանական (ըստ հարկերի) շեղումը.

3) ներքին միջնորմների և այլ ոչ կառույցիածքային տարրերի տեղադիրքի շեղումները՝ սենքերի հարաշավիերի նվազագույն նորմերի պահանման պայմանով:

71. Սույն կարգի 69 կետով սահմանված շեղումները համարվում են ոչ էական՝ հետևյալ պահանջների ապահովման պայմանով՝

1) չեն փոփոխվել հաստատված նախագծային փաստաթղթերով նախատեսված՝

ա. օրյեկտի հարկայնությունը,

բ. օրյեկտի տեղադրման կարմիր և կառուցապատման գծերը,

շ. կառուցապատվող հողամասի սահմանները.

2) օրյեկտի կոնստրուկտիվ տարրերին չառնչվող ճարտարապետական արտահայտչամիջոցների (ճակատների, բարձրաքանդակների, ինտերիերի նկարվածք և այլն, եթե այդ շեղումները չեն հակառակ քաղաքաշինական կանոնադրության պահանջներին) փոփոխման դեպքում առկա է հախագծող հեղինակի համաձայնությունը.

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված փոփոխությունները կատարվել են սույն կետի 1-ին ենթակետի պահանջների իրականացման ապահովմամբ:

#### **ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱԿՈՎՈՒԹՅՈՒՆԸ**

72. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26 հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրիած նախագծային թույլտվության (ճարտարապետականագծային առաջադրանքների), բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանոնադրությամբ կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է որանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:

73. Վարչական իրավապահատումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրի համաձայն համայնքի ղեկավարը բննում է շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենադրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը շավարտելու վերաբերյալ գործերը:

#### **ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՏԸՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ**

74. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ղեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին». N802 որոշմամբ սահմանված կարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը Հրազդան համայնքում կատարում է համայնքի ղեկավարը: